

սրբեացի զինիս այս յանուն Հաւր եւ Որդոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ » եւն: Գարձեալ կը յարէ երկրորդ աղօթք մը, որով կը խնդրէ սրբել այդ նիւթը « յամենայն չարութենէ դիւաց եւ յամենայն գազանային դարժանութենէ, եւ յամենայն չար դեղատութենէ » եւ այլն:

Իսկ մեք՝ այսքան սնտեօք պաշարուած մեր հարց ականջին հծծենք՝ հեթանոսաց Առաքելոյն յեղյեղած եւ անոնց չհասկացած լուսաւոր խօսքերը՝ թէ « Ամենայն արարածք Աստուծոյ բարի են, եւ չիք ինչ խոտան » անոնց մէջ (Ա. Տիմ. Գ, 4): Եւ թէ հրէական խտրութիւնքը մեզ՝ Աւետարանի աշակերտացս չտրուեցան, այլ Իսրայելի զաւակաց միայն. վասն զի « Ամենայն ինչ սուրբ է սրբոց » (Տիտ. Ա, 15):

